

# ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ 100-ՕՐՅԱ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

## **Համայնքային բյուջեների կատարում**

Սյունիքի մարզի համայնքների 2018թ. բյուջեներով նախատեսված եկամուտները ավելացել են 75,2 մլն. դրամով, այդ թվում՝ սեփական եկամուտները՝ 12,8 մլն. դրամով: 2017թ. նույն ժամանակաշրջանի համեմատ ավել է հավաքվել 141,8 մլն. դրամ, սեփական եկամուտների աճը կազմում է 14.4 %: Սեփական եկամուտները բնակչության մեկ շնչի հաշվարկով կազմում են 13,9 հազ. դրամ՝ նախորդ տարվա 11,9 հազ. դրամի փոխարեն: Սեփական եկամուտների տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտների մեջ կազմում է 36,4 %, 2017 թվականին այն կազմել է 34,3%:

## **ՏԻՄ ոլորտ**

Քանի որ շրջանառության մեջ է դրվել «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի նախագիծը, Սյունիքի մարզպետարանը դրա վերաբերյալ առանցքային նշանակություն ունեցող մի շարք առաջարկություններ է ներկայացրել:

Օրենքով սահմանված կարգով, ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարի հրամանով հաստատված աշխատանքային ծրագրի համաձայն՝ իրավական եւ մասնագիտական հսկողություն է իրականացվել Տաթև Բազմաբնակավայր համայնքում: Ըստ ծրագրի՝ հաջորդ նմանատիպ հսկողությունները կանցկացվեն Մեղրի եւ Տեղ համայնքներում:

Ընթացք է տրվել քաղաքացիների ու համայնքների բնակիչների կողմից ՀՀ վարչապետին ուղղված բազմաթիվ դիմումների քննությանը եւ հարցերի լուծմանը: Բնակչության բարձրացրած հարցերի մի մասը լուծում է ստացել, մնացածի լուծումն ընթացքի մեջ է, եղել են նաեւ այնպիսիք, որ լուծում չունեն կամ չէին կարող դիմումատուի նախընտրած ելքն ունենալ:

Մարզպետարան մուտքագրված եւ իրենց լուծմանը սպասող դիմումները հաշվառված են եւ դրանց կատարման ընթացքը վերահսկվում է:

Կատարվել են այցելություններ մարզի բոլոր 8 համայնքներ եւ այդ համայնքների որոշ բնակավայրեր:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել Տեղ համայնքի բնակիչների բարձրացրած խնդիրներին: Սյունիքի մարզպետը ներկայացել է նրանց բողոքի ակցիային, տեղում լսել բնակիչներին : Ընթացք է տրվել Տեղ համայնքի մի խումբ բնակիչների՝ ՀՀ վարչապետին ուղղված դիմումին, որը Սյունիքի մարզպետի հանձնարարությամբ ուսումնասիրվել է մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումներում, ինչպես նաև մարզպետարանից գործուղված մասնագետների միջոցով քննարկվել է Տեղ գյուղում՝ դիմումատուների անունից հանդես եկող՝ քննարկման հրավիրված ներկայացուցիչների մասնակցությամբ, ինչպես նաև ներկայացվել Տեղ համայնքի ղեկավարին եւ քննարկվել համայնքապետարանում:

Հստակ կարգավորում է ստացել Սյունիքի մարզային գորակոչային հանձնաժողովի գործունեության կազմակերպումը՝ հանձնաժողովի գործավարության կազմակերպման մասով:

Պարզվել է, որ 2017 թվականի նոյեմբերի 5-ից՝ Կապան խոշորացված համայնքի ստեղծումից հետո, նախկին 32 համայնքներին պատկանող գույքն օրենքի համաձայն անցել է Կապան խոշորացված համայնքին, սակայն այնտեղ չի իրականացվել նախկին գյուղական համայնքներին պատկանող գույքի՝ սահմանված կարգով գույքագրում եւ չի ընդունվել համայնքի ավագանու համապատասխան որոշում՝ գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին: Կապան համայնքի ղեկավարի պաշտոնակատարին առաջարկվել է միջոցներ ձեռնարկել համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օրենքով սահմանված կարգով ամբողջությամբ գույքագրելու, համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելու եւ համայնքի գույքի պատշաճ կառավարում իրականացնելու ուղղությամբ: Նշված խնդիրը ներկայացվել է նաև մարզի բոլոր համայնքներին եւ առաջարկվել է գույքի կառավարման պարտադիր խնդիրները իրագործելիս՝ բացառել խախտումները, թերություններն ու բացթողումները:

### **Քաղաքաշինության ոլորտ**

Մարզպետարանի քաղաքաշինության վարչությունը հաշվետու ժամանակահատվածում, քաղաքաշինության ոլորտում իրականացրած աշխատանքների մասով, ուսումնասիրություններ է կատարել 6 խոշորացված՝ Կապան, Գորիս, Սիսիան, Տեղ, Տաթև եւ Քաջարան համայնքներում:

Ուսումնասիրությունների արդյունքում 5 համայնքներում հայտնաբերվել են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումներով թույլատրված, ինչպես նաև բնակչության կողմից ինքնակամ կերպով իրականացված 59 շինություններ, որոնցից Կապանում՝ 23, Գորիսում՝ 25, Քաջարանում՝ 8, Տեղում՝ 2, Սիսիանում՝ 2:

Մարզպետարանի կողմից առաջարկվել է համայնքների ղեկավարներին օրենքով սահմանված կարգով կասեցնել ինքնակամ, ինչպես նաև քաղաքաշինական նորմերի խախտումով իրականացված շինությունների շինարարական աշխատանքները եւ կառուցապատողներին ենթարկել վարչական պատասխանատվության: Հաշվետու ժամանակաշրջանի կատարված աշխատանքների արդյունքում՝ 5 խոշորացված համայնքների ղեկավարների կողմից կիրառված վարչական տույժերի շնորհիվ համայնքային բյուջեներ պետք է մուտքագրվի 5մլն.800հազ. դրամ: Համեմատության համար նշենք, որ 2017 թվականին ողջ մարզում այդ թիվը կազմել է 8 մլն.600 հազ.դրամ: Հաշվետու ժամանակահատվածում վարչության մասնագետների կողմից մարզի համայնքներում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում, ըստ առաջնահերթության, վերհանվել են հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրները եւ ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարություն:

Կառավարության կողմից ընդունվել է մարզում հրատապ լուծում պահանջող 13 ծրագիր՝ ընդհանուր 422մլն դրամ արժեքով, որոնք կիրականացվեն ընթացիկ տարում: Ներկա պահին վարչության ճարտարապետաշինարարական բաժնի մասնագետների կողմից ուսումնասիրություններ են կատարվում Գորիս համայնքի բյուջեով 2018թ. ընթացքում 5 շինարարական ծրագրերով իրականացվող աշխատանքների ծավալների եւ որակի՝ նախագծանախահաշվային փաստաթղթերին համապատասխանության ստուգման ուղղությամբ:

Տարեւ խոշորացված համայնքում իրականացվել են վարչական ստուգումներ՝ 26.09.2017թ.-29.06.2018թ. ժամանակահատվածի համար, որի արդյունքում վեր են հանվել համայնքի կողմից քաղաքաշինության բնագավառում թույլ տրված խախտումները եւ բացթողումները: Դրանց վերաբերյալ կազմվել են արձանագրություններ, իսկ համայնքի ղեկավարին առաջարկվել է, հետագայում նման երեւոյթներից զերծ մնալու համար, կարգը խախտողներին եւ ոլորտի պատասխանատուներին ենթարկել պատասխանատվության:

Առաջին անգամ փորձ է արվել պարզելու մարզում բնակարանի կարիք ունեցող ընտանիքների քանակը՝ միաժամանակ առաջարկելով յուրաքանչյուր բնակավայրում (քաղաք, գյուղ) պետական սեփականություն հանդիսացող չշահագործվող շենք-շինությունները բնակարանների վերափոխելու համար անհրաժեշտ մոտավոր ներդրումների չափը:

ՀՀ Վարչապետի Սյունիքի մարզ կատարած այցի շրջանակներում բարձրացված հարցերի վերաբերյալ վարչությունը ստացել է 56 գրություն, որոնցից 12 վերաբերյալ կատարվել է լրացուցիչ ուսումնասիրություն եւ պատասխանել դիմումատուներին, մնացած գրություններին պատասխանվել է օրենքով սահմանված կարգով:

Ընդհանուր առմամբ 100 օրում վարչությունը ստացել է 526 գրություն, դիմում եւ հանձնարարական, որոնցից 447-ին տրվել է պատասխան:

### **Հողաշինության ոլորտ**

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմվել եւ ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնելու նպատակով ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե է ներկայացվել ՀՀ Սյունիքի մարզի առ 01.07.2018թ. հողային հաշվեկշիռը՝ նախօրոք այն համաձայնեցնելով ՀՀ գյուղատնտեսության նախարարության հետ:

Հողամասերի նպատակային նշանակության փոփոխության նպատակով կազմված 8 հողաշինարարական գործեր մասնագիտական վերլուծության արդյունքում համապատասխան հիմնավորումներով հետ են ուղարկվել համայնքներին՝ լրացուցիչ պարզաբանումներ եւ հիմնավորումներ ներկայացնելու, հանրային քննարկում կազմնակերպելու, անհրաժեշտության դեպքում այն լրամշակելու համար:

Մասնավորապես, լրացուցիչ քննարկման նպատակով հետ է ուղարկվել մամուլում հնչեղություն ստացած՝ Քաջարան համայնքում ավելի քան 338 հեկտար մակերեսով գյուղատնտեսական եւ անտառային նշանակության հողամասերի նպատակային նշանակության փոփոխության առաջարկը, ըստ որի նախատեսվում էր նշված հողամասերը փոխադրել արդյունաբերական ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա եւ կառուցապատման իրավունքով հատկացնել «Զանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ին:

ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի N599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանն են ներկայացվել.

- ՀՀ Սյունիքի մարզի համայնքների կադաստրային քարտեզներում նկատված թերությունների վերացման նպատակով կազմված թվով 5 հողաշինարարական գործեր, որոնց արդյունքում ավելի քան 7.0 հեկտար հողամասերի մասով վերականգնվել է ֆիզիկական եւ իրավաբանական անձանց սեփականության իրավունքի պետական գրանցումը:
- Հողամասերի նպատակային նշանակության փոփոխության նպատակով համայնքներում կազմված թվով 3 հողաշինարարական գործեր, որոնց արդյունքում նպատակային նշանակությունը փոփոխված ավելի քան 2.5 հեկտար հողամասերը կկառուցապատվեն ըստ նպատակային նշանակության՝ խթանելով մանր ու միջին բիզնեսի՝ հատկապես տուրիզմի եւ սպասարկման ոլորտի զարգացումը՝ լրացուցիչ ֆինանսական միջոցներ ուղղելով տեղական բյուջեներ:

ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելու նպատակով կազմվել էլ ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարությանն է ներկայացվել «ՀՀ կառավարության 2005 թվականի հոկտեմբերի 13-ի N1998-Ն որոշման մեջ փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որի ընդունմամբ Կապան համայնքի Ն.Խոտանան բնակավայրի պետական սեփականության որոշ հողամասեր սեփականության իրավունքով անհատույց կփոխանցվեն Կապան համայնքին:

Իրականացվել են Տեղ համայնքի Տեղ բնակավայրում համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության վարելահողերի ճշտման հետ կապված աշխատանքներ, որի արդյունքում ինքնակամ կամ հատկացված չափից ավելի օգտագործվող շուրջ 20 հա վարելահողեր մրցութային կարգով կտրամադրվեն վարձակալությամբ:

### **Քարտուղարություն**

Այս ժամանակատվածում մարզպետարան մուտքագրվել է քաղաքացիների 959 դիմում-բողոք, որից 273 դիմումներ վերահասցեագրվել էին ՀՀ կառավարության աշխատակազմից, 22-ը՝ ՀՀ նախարարություններից:

349 դրամական օգնության դիմումներից բավարարվել է 155 քաղաքացու խնդրանք, որից քաղաքացիների ընդունելության ժամանակ՝ 100 դիմում:

241 աշխատանքի տեղավորման դիմումներից բավարարվել է 19 քաղաքացու խնդրանք, որից քաղաքացիների ընդունելության ժամանակ՝ 8-ը:

Նշված ժամանակահատվածում ՀՀ Սյունիքի մարզպետի մոտ ընդունելության է մասնակցել 145 քաղաքացի, որից՝ 104-ը դրամական օգնության, 41-ը աշխատանքի տեղավորման խնդրանքով:

### **Ներքին աուդիտ**

Մարզպետարանի համակարգի պետական ոչ առևտրային կազմակերպություններում, փակ բաժնետիրական ընկերություններում եւ մարզպետարանի ստորաբաժանումներում, մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի տարեկան ծրագրով, նշված ժամանակահատվածում աուդիտորական ուսումնասիրություններ են իրականացվել նախատեսված 20 կազմակերպություններում:

«Մեդրիի ՍՍՏԳ»-ում կատարված աուդիտորական ուսումնասիրության արդյունքներով կազմված հաշվետվությունը եւ մյուս փաստաթղթերը ուղեկցող գրությամբ ուղարկվել են ՀՀ քննչական կոմիտե՝ սահմանված կարգով ընթացք տալու նպատակով:

### **Զարգացման ծրագրերի եւ վերլուծության բաժին**

ՀՀ Սյունիքի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարության իրականացման 2018 թվականի գործունեության ծրագրի առաջին կիսամյակի մոնիթորինգի հաշվետվության է կազմվել եւ ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարություն:

ՀՀ վարչապետի՝ Սյունիքի մարզ կատարած այցելության ընթացքում վարչապետին հանձնված 34 աշխատանքի տեղավորման դիմումները կից գրությամբ ուղարկվել են «ԶՊՄԿ» ՓԲԸ:

Ամփոփվել եւ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարություն է ներկայացվել 2018 թվականի առաջին կիսամյակում համայնքների կողմից առևտրի,

հանրային սննդի եւ կենցաղային ծառայությունների ոլորտում հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն:

ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարություն է ներկայացվել Սյունիքի մարզի գործարարների կողմից ներկայացված եւ բաժնի կողմից լրամշակված 12 ներդրումային ծրագիր՝ ներդրումային-գործարար ծրագրերի հարթակի ստեղծման նպատակով:

Շարունակական աշխատանք է կատարվել համայնքների կողմից ներկայացված սուբվենցիայի ծրագրերի լրամշակման եւ հաստատման, ինչպես նաեւ հետագա գործընթացների իրականացման ուղղությամբ

Համակագրվել է 2018թ. հունիսի 29-ին կայացած Հայ-ռուսական միջտարածաշրջանային 7-րդ համաժողովին Սյունիքի մարզի պատվիրակության մասնակցության ապահովումը եւ գործարար հատվածի կողմից համաժողովին մասնակցությունը:

ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարություն է ներկայացվել հայ-չինական եւ հայ-հնդկական միջկառավարական հանձնաժողովների հերթական նիստերի քննարկման հարցերի վերաբերյալ առաջարկություններ:

ՀՀ բնապահպանության նախարարություն է ներկայացվել Կապան, Քաջարան, Մեղրի համայնքների շրջակա միջավայրի եւ բնակչության առողջության պահպանման ծրագրերը՝ ՀՀ 2019 թվականի բյուջեում ներառելու նպատակով:

Ամփոփվել է ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարություն եւ ՀՀ տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարարության զբոսաշրջության կոմիտե է ներկայացվել տեղեկատվություն մարզի հյուրանոցային տնտեսության օբյեկտների եւ զբոսաշրջային այցելությունների վերաբերյալ:

Իրականացվել է համայնքների վարչական տվյալների շտեմարանի էլեկտրոնային ծրագիր մուտքագրման աշխատանքների համակարգումը եւ ներկայացումը ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարություն

#### **Գյուղատնտեսության ոլորտ**

Համապատասխան բաժինն իր լիազորությունների շրջանակներում կազմակերպել է համակարգել է դաշտավարության բնագավառում՝ ցելերի նախապատրաստման,

խոտհնձի, բերքահավաքի աշխատանքները, որի արդյունքում մարզում ստացվել է խոտ՝ 80 000տ, ծղոտ՝ 50 000տ, հացահատիկ. ցորեն՝ 185 000տ, միջին բերքը՝ 21.5ց, գարի՝ 96 700տ, միջին բերքը՝ 23.0ց, հաճար՝ 30 600տ, միջին բերքը՝ 18.0ց:

Նշված բոլոր ցուցանիշները ավել են անցած տարվա համեմատ:

Կազմակերպվել է վերահսկվել է ոռոգման ջրի մատակարարման գործընթացը, որի արդյունքում լուրջ խնդիրներ չեն եղել: 2018թ. համար նախատեսված 10.0 մլն խմ թույլատրելի չափաբաժնից փաստացի օգտագործվել է 6.5 մլն խմ: Կատարվել է զգալի տնտեսում:

Համակարգվել են մարզի տարածքում անասնաբուժական ծառայության հակահամաճարակային միջոցառումների իրականացման եւ կենդանիների ինֆեկցիոն հիվանդությունների կանխման եւ վերացման աշխատանքները:

Այդ ընթացքում կատարված միջոցառումների ընդհանուր թիվը (բոլոր անասնատեսակների) կազմում է 16000 գլուխ:

Կազմակերպվել է մարզի տարածքի սերմնաբուծական տնտեսությունների եւ արհեստական սեմնավորման խմբերի աշխատանքների համակարգումը, որի արդյունքում մարզում հավաքվել է շուրջ 1200տ առաջին վերարտադրության եւ 150տ ելիտա վերարտադրության սերմացու: Այս ընթացքում կատարվել են նաեւ շուրջ 680 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիների սերմնավորման աշխատանքներ:

Կազմակերպվել է ՀՀ կառավարության կողմից 2018 թվականի ընթացքում իրականացվող սուբսիդավորված վարկերի, ինտենսիվ այգեգործության լիզինգով տրվող գյուղտեխնիկայի եւ այլ ծրագրերի իրականացման ընթացքը:

Կազմակերպվել է գյուղացիական տնտեսություններին մատակարարվող՝ դիզ վառելանյութի, պարարտանյութի, սերմացուների եւ մկան դեղերի տրման ծրագրի իրականացումը:

Ուսումնասիրել եւ պատասխան է տրվել ոլորտին առնչվող՝ ՀՀ վարչապետին ուղղված 18 եւ մարզպետին ուղղված 20 նամակների:

### **Սոցիալական ոլորտ**

Համաձայն Սյունիքի մարզպետի հանձնարարականի, Սյունիքի մարզպետարանին «Այլ նպաստներ բյուջեից» ծախսային հոդվածով տրամադրված գումարները հատկացվում են բացառապես մարզպետարան դիմած սոցիալապես անապահով



ընտանիքներին՝ հիմք ընդունելով մարզպետի որոշմամբ ստեղծված նյութական (դրամական) օգնության խնդրանքով մարզպետարան դիմած քաղաքացիների սոցիալական վիճակի ուսումնասիրության նպատակով ստեղծված հանձնաժողովի դրական եզրակացությունը:

155 սոցիալապես անապահով քաղաքացիների տրվել է դրամական օգնություն:

Կապանի արվեստի մանկական դպրոցի թատերարվեստի բաժնի 2-րդ դասարանի 15 սաների տրամադրվել է դրամական օգնություն՝ Բաթումի քաղաքում հուլիս ամսին անցկացված միջազգային փառատոնին մասնակցելու համար:

Սյունիքի մարզպետի 2018թ. օգոստոսի 20-ի N194-Ա կարգադրությամբ Մեղրիի սոցիալական աջակցության տարածքային գործակալությունում օգոստոսի 23-31-ը իրականացվել են աուդիտորական ուսումնասիրություններ՝ մարզպետարանի աշխատակիցներից կազմված փորձագետների ներգրավմամբ:

Հայաստանում Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման շրջանակներում «Կապանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության նախկին ծննդատան մասնաշենքի 1-ին եւ 2-րդ հարկերից 737.32 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով տարածքը ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությանը հանձնելու նպատակով ՀՀ Սյունիքի մարզպետի 22 օգոստոսի 2018 թվականի N83-Ա որոշումով ստեղծվել է գույքի հանձնման հանձնաժողով:

Միսիան քաղաքում համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնի համար համայնքի տրամադրած Միսական 41 հասցեի 710քմ տարածքի աննպատակահարմարության վերաբերյալ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության կարծիքին ՀՀ Սյունիքի մարզպետը եւ Միսիան համայնքի ղեկավարը համաձայն չեն եղել եւ առաջարկել են շինության կրկնակի հետազոտություն իրականացնել համապատասխան մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ համարելով, որ ներկայացված առաջարկը լավագույն տարբերակն է:

### **Առողջապահության ոլորտ**

ՀՀ առողջապահության նախարարի մարզ կատարած այցելության ընթացքում համաձայնություն է ձեռք բերվել «Մեղրու ԲԿ» ՓԲԸ ջեռուցման հարցի լուծման վերաբերյալ, մասնավորապես սկսվել են այն արեւային էներգիայի միջոցով

կազմակերպելու նախագծանախահաշվային աշխատանքները, ծրագրվում է մարզի մյուս հիվանդանոցները եւս արեւային էներգիայով ապահովելու գործընթաց սկսել: ՀՀ առողջապահության նախարարության հետ ձեռք բերված համաձայնության արդյունքում մարզին տրամադրվել են անհրաժեշտ եւ բավարար քանակի շտապ օգնության մեքենաներ եւ ռեանոմոբիլներ:

ՀՀ առողջապահության նախարարի այցելության ընթացքում հրավիրվել էին նաեւ համայնքների ղեկավարները, որոնց հետ համատեղ քննարկվեցին մի շարք խնդիրներ ու ձեռք բերվեցին համաձայնություններ՝ առողջապահության բնագավառի հիմնախնդիրներին լուծում տալու գործում վերջիններիս ակտիվ մասնակցության վերաբերյալ, մասնավորապես հետեւյալ հարցերում. ա/ Գորիսի ԲԿ պոլիկլինիկայի մասնաշենքի հիմնանորոգման, բ/մարզ հրավիրված մասնագետներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու հարցում, գ/ Սիսիանի եւ Մեղրու տարածաշրջաններից դիալիզով հիվանդներին տրանսպորտային ծախսերի փոխհատուցման վերաբերյալ: Կապանի ԲԿ-ն շտապ օգնության ծառայությունը նախկինում իրականացնում էր մեկ բրիգադի միջոցով, որը դժգոհություններ էր առաջացրել, այժմ այն իրականացնում է երկու բրիգադներով:

ՀՀ կառավարության 2018թ. ապրիլի 12-ի N 464-Ա որոշմամբ պետք է լուծարվեր Սիսիանի ԲԿ-ն, որը դժգոհություն էր առաջացրել Սիսիանի տարածաշրջանի բնակչության մեջ: Մարզպետ Կարեն Համբարձումյանի շնորհիվ հնարավոր եղավ Սիսիան հրավիրել ՀՀ առողջապահության եւ պաշտպանության նախարարներին՝ հարցն ավելի մանրակրկիտ քննարկելու համար, որի արդյունքում համաձայնություն ձեռքբերվեց առողջապահության նախարարությանը ներկայացնելու Սիսիանի ԲԿ-ի գործունեության հինգ տարվա գործարար ծրագիրը, հարցն հանգամանալից ուսումնասիրելու եւ հնարավորության դեպքում կառավարությանն առաջարկություն ներկայացնելու համար՝ թիվ 464-Ա որոշումը չեղարկելու նպատակով: Եվ ի վերջո, սեպտեմբերի 14-ի կառավարության նիստում ուժը կորցրած է ճանաչվել 2018 թվականի ապրիլի 12-ի «Սիսիանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին» N 464-Ա որոշումը:

Կապանի բժշկական կենտրոն են հրավիրվել եւ այժմ աշխատում են 2 նոր երիտասարդ մասնագետներ:

Կապանի բժշկական կենտրոնի հեմոդիալիզի բաժանմունքը համալրվեց եւս երկու նոր սարքավորումով, որը տրամադրել է Կապանի լեռնահարստացման կոմբինատը:

### **Կրթության, մշակույթի, սպորտի ոլորտներ**

Կազմակերպվել է դպրոցական առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլում հաղթած սյունեցի աշակերտների այցը Արցախ, որին մասնակցել է նաեւ Սյունիքի մարզպետը:

Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչությանը վերաբերող հարցերի շրջանակում ՀՀ վարչապետի Սյունիքի մարզ կատարած այցի ընթացքում բարձրացվել է 6 հարց՝ Սիսիան՝ 3, Գորիս՝ 2, Կապան՝ 1: Հարցերի հիմնական բովանդակությունը՝ աշխատավարձերի չափը՝ կապված դպրոցների թերկումպլեկտավորման, հաստիքային միավորների կրճատման հետ, իրավունքների պաշտպանություն, Գորիսի պետհամալսարան: Վարչապետի այցի ընթացքում առձեռն հանձնվել է 5 դիմում՝ Սիսիան՝ 1, Գորիս՝ 1, Քաջարան՝ 1, Կապան՝ 2: Դիմումներում հիմնականում բարձրաձայնվել է Սիսիանի թիվ 5 հ/դ-ին պատկանող շենքում բնակիչների մնալու հարցը, տնօրենի մրցույթի կարգը, կենսաթոշակային տարիքի ուսուցչի աշխատելը եւ աշխատանքի տեղավորումը: Տրվել են հիմնավորված պատասխաններ:

Վարչությունում քննարկվել է հիմնավորված պատասխաններ են տրվել նաեւ քաղաքացիներից ՀՀ վարչապետին ուղղված եւ ՀՀ Սյունիքի մարզպետարան վերահասցեագրված 3 դիմումներին եւ ՀՀ ԿԳ նախարարին ուղղված՝ ՀՀ Սյունիքի մարզպետարան վերահասցեագրված 2 դիմումներին եւ ՀՀ Սյունիքի մարզպետ Կ. Համբարձումյանին ուղղված 8 դիմումներին: Հարցերը կրկին առնչվում էին իրավունքների պաշտպանությանը, կենսաթոշակային տարիքի ուսուցչի աշխատելուն, սոցիալական օգնությանը:

Սյունիքի մարզպետ Կ.Համբարձումյանին այս ոլորտում աշխատանքի տեղավորման խնդրանքով դիմել է 55 քաղաքացի: Ուսումնական հաստատություններում թափուր տեղերի առկայության դեպքում դիմորդներն իրազեկվել են եւ ցանկության դեպքում դիմել համապատասխան ուսումնական հաստատություն: Դիմորդներից 6-ը ընդունվել են աշխատանքի՝ իրենց մասնագիտությանը համապատասխան:

Դիմումները հաշվառվել են, եւ թափուր աշխատատեղերի առկայության դեպքում քաղաքացիները կիրազեկվեն:

Մյունիքի մարզպետարանն ապահովել է հունիսի 19-ից մինչեւ օգոստոսի 15-ը /երեք հերթափոխով/ կազմակերպված՝ մարզի զոհված, հաշմանդամ զինծառայողների, ծնողագուրկ ու անապահով բազմազավակ ընտանիքների 7-13 տարեկան 195 երեխաների ամառային հանգիստը Հանքավանի «Լուսաբաց» եւ «Հասմիկ» ճամբարներում: Օգոստոսի 10-20-ը ապահովել է Արցախի Հանրապետությունում ՀՀ ԿԳ նախարարության կազմակերպած վրանային ճամբարին մարզից 5 երեխայի մասնակցությունը:

Մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններին է բաշխվել 71 անուն 41164 կտոր վճարովի, 34 անուն 28121 կտոր անվճար եւ 2 անուն 1230 կտոր ատլաս:

Ընթացքի մեջ է Տեղ համայնքի Արավուս գյուղում 14 հոգանոց մանկապարտեզի բացման կազմակերպումը:

2018 թվականի հունիսին ՀՀ նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական նախադպրոցական հաստատություն» մրցույթի հանրապետական փուլում 1-ին տեղ զբաղեց մարզային փուլում հաղթած Գորիսի թիվ 2 ՆՈՒՀ-ի թիմը եւ ՀՀ սպորտի եւ երիտասարդության նախարարության կողմից պարգևատրվեց մեդալներով, հավաստագրերով, գավաթով եւ մարզագույք ձեռք բերելու համար դրամական մրցանակով:

2018 թվականի հունիսի 26-28-ը կազմակերպվել է ՀՀ նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի մարզային փուլը: Մասնակցել է Կապանից, Գորիսից եւ Քաջարանից 20 ընտանիք, որոնցից 12-ը մասնակցել է մրցույթի հանրապետական փուլին ընդհանուր պայքարում զբաղեցրելով 5-րդ տեղը:

2018 թվականի հուլիսի 7-ին եւ 8-ին Գորիսին հանձնվեց «ԱՊՀ մշակութային մայրաքաղաքի» տիտղոսը: Միջպետական ծրագրի շրջանակներում կազմակերպված «Գորիսը՝ 2018 թվականի ԱՊՀ մշակութային մայրաքաղաք» միջոցառումներին մասնակցեցին բազմաթիվ հյուրեր արտերկրից եւ Հայաստանից, միջոցառումներին ներկա էր ՀՀ մշակույթի նախարար Լիլիթ Մակունցը:

2018 թվականի հուլիսի 11-18-ը Կապանի արվեստի մանկական դպրոցի թատերարվեստի խումբը մասնակցեց «Оранжевый Кобулет» փառատոնին:

2018 թվականի օգոստոսի 15-ին Կապանում կայացավ տարեցների հանրապետական խաղերի մարզային փուլը, ձեւավորվեց հավաքական թիմ՝ հանրապետական փուլին մասնակցելու համար:

2018 թվականի օգոստոսին մարզի թիմը հանդես եկավ ՀՀ Նախագահի մրցանակի համար «Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթի հանրապետական փուլում, թիմը 5-րդ տեղում էր, անհատական մրցումներում դարձաւ մարզաձեւից՝ 3-րդ տեղում: «Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթի կազմակերպչական աշխատանքներին ակտիվ մասնակցություն ցուցաբերելու համար ՀՀ Սյունիքի մարզն արժանացավ ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարության շնորհակալագրի:

2018 թվականի սեպտեմբերին ՀՀ գյուղական մարզական խաղերի հանրապետական փուլում Սյունիքի մարզի թիմը գրավել է 3-րդ տեղը:

Պայմանավորվածություն է ձեռքբերվել մարզի մարզադպրոցները գեղարվեստական մարմնամարզության մարզական գույքով վերազինելու մասին:

### **Ընտանիքի, կանանց եւ երեխաների իրավունքների պաշտպանության բաժին**

Մարզում որպէս երեխա որդեգրել ցանկացող թեկնածու հաշվառվել է 5 անձ, իսկ որպէս որդեգրման ենթակա երեխա՝ 1: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 11 երեխաների տրվել է վկայագիր:

Ոստիկանության Կապանի բաժնի ԱԳ եւ ԸԲԿԲ-ում հաշվառված 1 անչափահաս երեխայի եւ նրա ընտանիքի ուսումնասիրություն է կատարվել, գնահատվել կարիքները եւ այդ տեղեկատվությունը գրանցվել է «Նորք» տեղեկատվալերլուծական բազայի «Մանուկ» տեղեկատվական ենթահամակարգում:

Կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված 23 երեխաների տվյալներ մուտք են արվել Նորք տեղեկատվալերլուծական բազայի <<Մանուկ>> տեղեկատվական ենթահամակարգ:

Հայ օգնության ֆոնդի հովանավորչական ծրագրում ընդգրկված միակողմանի եւ երկկողմանի ծնողագուրկ 36 երեխաների /20 երեխա՝ Սիսիան, 16՝ Գորիս/ ամառային հանգիստը կազմակերպվել է Հանքավանի «Արագած» ճամբարում:

### **Զորահավաքային ոլորտ**

Մյունիքի մարզպետ Կարեն Համբարձումյանի գլխավորությամբ 2018 թվականի հուլիսի 24-ին անցկացվեց մարզի գորահավաքային մարմնի ընդլայնված նիստ, որին մասնակցեցին գորահավաքային մարմնի բոլոր անդամները:

Մշակվել է համայնքապետարաններին, համայնքներում գործող գորահավաքային առաջադրանք ունեցող կազմակերպություններին է տրամադրվել «Խաղաղից պատերազմական ժամանակաշրջանի փոխադրման» պլանների կազմման մեթոդական ուղեցույցը: Աշխատանքները գտնվում են ավարտական փուլում:

Պարբերաբար ճշտվել են անձնակազմի բաշխումը կառավարման կետերի, օպերատիվ է աշխատանքային խմբերի միջև, նրանց գործառույթները կառավարման կետերի զբաղեցման է դրանցում աշխատանքի կարգը.

Մարզկենտրոնի պահեստային կառավարման կետը բերվել է աշխատանքային վիճակի՝ կառավարման մարմնի ամբողջ անձնակազմով շուրջօրյա աշխատելու համար:

Մարզպետարանի գորահավաքային նախապատրաստության բաժինը մասնակցել է 2018 թվականի հուլիսի 11-ին Սիսիանում՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից անցկացված գորավարժություններին:

«ՇԱՆԹ-2018» եռաստիճան հրամանատարաշտաբային գորավարժությունների ընթացքում մարզպետարանի, մարզի համայնքապետարանների, գորահավաքային առաջադրանք ունեցող կազմակերպությունների անձնակազմերը էլ ողջ պետական կառավարման համակարգը բերվել է ուժեղացված, բարձր էլ լրիվ պատրաստականության աստիճանի: Կառավարության էլ նախարարությունների կողմից տրված պայմանական ներմուծականները կատարվել են ժամանակին: Երկու ներմուծականներով կատարվել են գործնական բնույթի միջոցառումներ: Մարզպետարանի անձնակազմը բարձր մակարդակով կատարել է առաջադրված խնդիրները: Առաջիկայում կարվեն հետեւություններ էլ կտրվեն առաջարկություններ: